Շախմատից մինչեւ ԳԱԱ Սերժ Սարգսյանի տարածքն է

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիան այսօր սկսել է տարեկան ընդհանուր ժողովը: 2006 թվականի մայիսին տեղի են ունեցել ԳԱԱ նախագահության ընտրություններ:

Ըստ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի՝ նախագահության չափազանց մեծ կազմը չէր նպաստում ակադեմիայի բազմաթիվ խնդիրների լուծմանը. բաժանմունքներում առողջ գիտական մթնոլորտի բացակայությունը չէր թողնում, որ գիտությունը զարգանա: Ռադիկ Մարտիրոսյանը վստահեցրեց, որ պետք է շարունակել ԳԱԱ համակարգի բարեփոխումները եւ իրականացնել գիտական աշխատողի համար բավարար կենսակերպ ապահովելու ծրագրեր: Ժողովին ներկա գիտնականները պատկառելի տարիքի էին: Դա բնական էր, որովհետեւ երիտասարդ ասպիրանտների կրթաթոշակը 6 հազար դրամ է, դրա համար էլ նրանք գերադասում են իրենց ուսումը շարունակել արտասահմանում: Ռադիկ Մարտիրոսյանը նշեց, որ կադրերի նորացման անհրաժեշտություն կա, բայց որպեսզի գիտական աշխատողը չհեռանա, պետք է նրա աշխատավարձը չվիրավորի նրա արժանապատվությունը: Տեղեկացնենք, որ նախորդ տարվա ընթացքում ԳԱԱ-ն համալրվել է 36 նոր թղթակից- անդամներով: Թղթակից-անդամների ընտրություններն առաջին անգամ անցկացվել են տարիքային տարբերակված ձեւով՝ մինչեւ 51 տարեկան եւ 51-ից բարձր: Հայտ ներկայացրած 129 թեկնածուներից ընտրվել են 38-ը: ԳԱԱ նախագահն այն կարծիքին է, որ շատ արժանավոր գիտնականներ մրցույթից դուրս են մնացել:

Ժողովին ներկա ՀՀ վարչապետ դարձած Սերժ Սարգսյանը Ռադիկ Մարտիրոսյանին խոստացավ հանդիպել գիտնականների հետ ու քննարկել գիտության առջեւ ծառացած խնդիրները: Ռադիկ Մարտիրոսյանը շտապեց հավաստիացնել, որ գիտնականների եւ վարչապետի հանդիպումը որեւէ քաղաքական նրբերանգ չի ստանա եւ այդ հանդիպման ընթացքում կքննարկվեն միայն գիտությանը վերաբերվող հարցեր: